
**ՊԱՐԶ ԵՎ ԲԱՐԴ ՆԱԽԱԴԱՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ՈՃԱԿԱՆ ԱՐԺԵՔԸ Ա. ԲԱԿՈՒՆՅԻ ՊԱՏՄՎԱԾՔՆԵՐՈՒՄ**

ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ Լ. Հ.

Ա. Բակունցի ստեղծագործությունը բացառիկ գեղարվեստական երևույթ է հայ արձակի պատմության մեջ: Գրել գյուղի ու գյուղացու տառապանքների ու իղձերի մասին և չկորցնել վեհ ազնվականի նկարագիրը, իսկապես բացառիկություն է, գեղարվեստական մի որակ, որ հազվագյուտ տաղանդներին է հատուկ: Կրկին թերթում ես արձակագրի պատմվածքների էջերը, և քո առջև կրկին բացվում է գեղեցիկի՝ հավերժի խորհուրդ ունեցող աշխարհը, կրկին զարմանում ես, թե Գորիսից եկած այդ երիտասարդը ինչպես է կարողացել թափանցել մարդկային հոգու գաղտնարանները, ինչպես է առօրյայում նկատել ու վեր հանել գեղեցիկը, վեհը, ազնվականը, պարզ ու հասարակ գյուղական կենցաղում գտել հավերժական արժեքներ, իսկ մեզ հետաքրքրող հարցի տեսանկյունից գտել ամենակարևորը՝ այս ամենի արտացոլմանը համարժեք լեզվական ձևավորում: Մեր կարծիքով, Բակունցի դեպքում քիչ է նշել, թե արձակագիրը գտել է իր ասելիքին համարժեք լեզվական միջոցներ, թե դրանք տեղին են ու նրբաճաշակ, այլ պետք է նաև ավելացնել, որ Բակունցյան բառերն ու արտահայտությունները, լեզվական այլևայլ միջոցներն ինքնին գեղարվեստական արժեք ունեն, այսինքն՝ Բակունցյան բառը, նախադասության տեսակը, պատկերավորման միջոցը քննելիս պետք է նկատի ունենանք, որ դրանք, առանձին վերցրած, լեզվական արվեստի նմուշներ են, և գործ ունենք լեզվի գեղագիտության հետ: Կարծում ենք՝ միայն այսպիսի մոտեցմամբ կարող ենք ճիշտ գնահատել հեղինակի լեզուն, վերհանել այդ լեզվի գեղագիտությունը՝ դրանով իսկ ճիշտ բնութագրելով Բակունցի նպաստը հայ գրական լեզվի զարգացմանը:

Որոշակի գիտական հետաքրքրություն է ներկայացնում Բակունցի պատմվածքների լեզվի շարահյուսական համակարգը, որից կառանձնացնենք նախադասության կառուցվածքային տեսակներից մեկը՝ պարզ և բարդ նախադասությունները՝ ցույց տալու դրանց ոճական արժեքը Բակունցի պատմվածքներում: Այս, ինչպես և ամեն մի լեզվական իրողության ոճական քննությունը խորությամբ կատարելու համար ամենից առաջ պետք է ներկայացնել գրողի հիմնական ասելիքը, դրանով պայմանավորված՝ տվյալ գրական ժանրի, մեր դեպքում՝ պատմվածքի կառուցվածքի Բակունցյան առանձնահատկությունները, որոնք և կկանխորոշեն գրողի ընտրած լեզվական միջոցների, այս դեպքում՝ պարզ և բարդ նախադասությունների ոճական արժեքը: Բակունցի պատմվածքներում հստակ երևում է մի ուշագրավ կենսափիլիսոփայություն. մարդու կյանքը տառապանքի, դառնության ու մաքառումների անվերջանալի շղթա է, ուր երջանկությունը, լուսավոր էջը լոկ եզակի պահ է, որն ընդմիշտ հիշվում է, չի մոռացվում և մի տեսակ փառավորում է մարդու կյանքը: Կյանքի գուցե վերջին աշունն ապրող ծերունի Դիլան դային («Միրհավ») մտորում է, որ երևի հաջորդ զարնանը ինքը չբացի այգու դռնակը և մտովի թերթելով անցած կյանքի ուղին՝ մտաբերում է ընդամենը մեկ լուսավոր դեպք, երբ Սոնան եկավ իրենց այգին, և այդ դեպքը այսօր

էլ ջերմացնում է նրա վերջին օրերը: Սաքանը («Մթնաձորի «չարքը») ևս ողջ կյանքում տեսել է միայն զրկանք, կերել իր օրվա հացը, պանիրն ու մածունը, և միայն մեկ անգամ է առնչվել գեղեցիկին, զգացել կնոջ թովչանքը, երբ գյուղ էր այցելել ընկեր Ասյան: Սարերում վրանների տակ ապրող լեռնուհին («Ալպիական մանուշակ»), որն ամբողջ կյանքում թիկունքին զգացել է մահակի հարված ու լուռ արտասվել, ահա մի անգամ իրեն կին է զգում, երբ քաղաքից եկած մարդիկ այցելում են Կաքավաբերդ:

Այս կենսափիլիսոփայությունը կանխանշում է պատմվածքի գործողությունների որոշակի ընթացք: Հեղինակը սովորաբար պատմվածքը սկսում է բնության խաղաղ, հանդարտ նկարագրությամբ, այնուհետև հիմնական գործողությունների մի խայծ է գցում՝ դրանով ընթերցողին նախապատրաստելով գալիք լարված իրադարձություններին, այնուհետև ծավալվում են գլխավոր դեպքերը, և հետևում է ավարտը՝ կրկին հիմնականում արտահայտված բնության իմաստալից պատկերով, որը հավերժացնում է գեղեցիկը, ցույց տալիս կյանքի շարունակականությունը: Այս ամենի գեղարվեստական արտացոլման համար գրողն ընտրում է նպատակասլաց լեզվական միջոցներ, այդ թվում՝ պարզ և բարդ նախադասություններ: «... Որևէ գրողի ստեղծագործության շարահյուսական կառուցվածքի ուսումնասիրությունը ընդհանուր առմամբ պետք է բացահայտի շարահյուսական հոմանիշների ընտրության, նրանց կապակցության եղանակների ու դրսևորման միջոցների, նախադասության՝ որպես խոսքի ավարտուն միավորի, արժեքն ու կառուցման հիմնական եղանակները՝ դրանցով ևս պարզաբանելով տվյալ գրողի ոճի էական ու անհատական հատկանիշները»¹: Ամենից առաջ նշենք, որ Բակունցի պատմվածքներում պարզ և բարդ նախադասությունների կիրառությունը գրեթե հավասար է, թեև առաջին հայացքից թվում էր, թե պարզ նախադասությունը պիտի զգալի գերակշռություն ունենար: Շատ որոշակի նկատելի է, որ գրողը կարողանում է բնականորեն ու տեղին համադրել պարզ և բարդ նախադասությունները՝ ստեղծելով ամբողջական գեղարվեստական պատկեր: Բազմաթիվ են նախադասության այս կառուցվածքների զուգադրման բնորոշ օրինակները: Ահա դրանցից մեկը, որը ներկայացնում է «Նամակ ռուսաց թագավորին» պատմվածքի ավարտը. «Շատ տարիներ են անցել: Այդ անցյալը ինձ համար դարձել է հիշողություն, որ հետզհետե ընկղմվում է մոռացության անդունդը: Միայն երբեմն աչքիս առաջ երևում է իմ Արթին պապի ալեհեր գլուխը, նրա կապույտ աչքերը և խեղճ ժպիտը: Սակայն հանկարծ ավերվում է և այդ պատկերը, նրա ժպիտը դառնում է ցավ, և ծերունու ջարդված ատամից նրա արխալուղի վրա ծորում է արյունը»²:

Բակունցի պատմվածքներում հատկապես հաջող զուգադրվում են պարզ և բարդ համադասական նախադասությունները, և այստեղ օրինակներն այնքան շատ են, որ դա կարելի է համարել արձակագրի լեզվի շարահյուսական համակարգի էական առանձնահատկություններից մեկը, գրողի ոճի նրբագիծը:

¹ Եզեկյան Լ., Ոճագիտություն, Ե., 2003, էջ 306:

² Բակունց Ա., Երկեր չորս հատորով, հ. I, Ե., 1962, էջ 221: Այսուհետև այս հատորի մեջբերումների էջերը կնշվեն բնագրին կից:

Այսպես, «Ալլաիական մանուշակ» պատմվածքի ամենադրամատիկ պահը արտացոլված է միմիայն պարզ և բարդ համադասական նախադասությունների խիստ ուշագրավ համադրությամբ. «Խանդը կայծակի պես փայլատակեց մռայլ հնձվորի սրտում: Աչքերը լայնացան, նա գունատվեց: Մայրը նայեց տղային, հրդեհվեց դեմքը, հայրը տեսավ կնոջ դեմքի կարմիրը: Այդ ամենը կատարվեց մի վայրկյանում: Հաջորդ վայրկյանին մարդը գազազած արջի նման ուստյուն արեց, նրա մագոտ ձեռքերը սեղմեցին ծանր մահակը, և մահակն անասելի թափով իջավ կնոջ թիկունքին» (189): Ժամանակ չկա, ամեն ինչ կատարվում է վայրկյանների ընթացքում, և ճիշտ է վարվել հեղինակը՝ այստեղ չկիրառելով ոչ մի բարդ ստորադասական նախադասություն, քանի որ վերջինս իր զանազան աստիճանավորումներով կթուլացներ պատկերի թափը, գործողությունների հարափոփոխությունը, իսկ պարզ և բարդ համադասական նախադասությունների զուգադրումը խիստ հարմար է. հեղինակը այդ նախադասությունների միջոցով ուշադրությունը մեկ մի դրվագի վրա է բևեռում, մեկ՝ մյուս: Ավելացնենք, որ ևս կես էջից ավելի հետևում են միայն պարզ և բարդ համադասական նախադասություններ, կրկին չկա ոչ մի ստորադասական նախադասություն (բացառյալ վերջինը), և պատմվածքի՝ դրամատիկ իրադարձություններով հարուստ այսպիսի ավարտը հավաստում է, որ գրողը գտել է նախադասության՝ վերոբերյալ երկու կառուցվածքային տեսակների զուգադրման ուշագրավ ձև՝ հատկապես դրամատիկ, տագնապալի իրադարձությունների պատկերման, ինչպես նաև նկարագրությունների համար: Ահա, օրինակ, «Նամակ ռուսաց թագավորին» պատմվածքի մի հատվածում հեղինակը նկարագրում է, որ Արթին պապն ու թոռը գնացել են հարևան գյուղը՝ պրիստավի մոտ: Հետևում է նոր միջավայրի նկարագրությունը՝ միմիայն պարզ և բարդ համադասական նախադասությունների զուգադրությամբ, նորից չկա ոչ մի ստորադասական նախադասություն. «Քիչ հետո մենք սպիտակ շենքի մոտ էինք: Ինչքան նորություն կար ինձ համար: Այստեղ փողոցներն ավելի լայն էին, տներն ավելի գեղեցիկ: Փողոցում շատ ժողովուրդ կար: Խանութների առաջ մարդիկ խոնվել էին՝ իրար՝ յուր էին ծախում, կով, բուրդ, մեկը գովում էր իր ապրանքը, մյուսը՝ բարձրաձայն սակարկում գնորդի հետ: Մի քանի հոգի բարևեցին պապիս: Այդ ինձ ուրախություն պատճառեց» (217):

Արձակագիրը հետաքրքիր է զուգորդում նաև պարզ համառոտ և տարբեր կառուցվածքների բարդ նախադասությունները: Այստեղ նկատելի է մի իրողություն. գեղարվեստական պատկերում հիմնական, գլխավոր միտքն արտահայտվում է պարզ համառոտ նախադասությամբ, իսկ տարատեսակ բարդ նախադասությունները մեկնում են այդ գլխավոր միտքը, կոնկրետացնում այն, որին նպաստում են բարդ նախադասությանը բնորոշ ամենատարբեր աստիճանավորումները: Ահա մի բնորոշ օրինակ «Մթնաձոր» պատմվածքից. «Անտառում հանկարծ կերևար, փայտահատի կողքին կկանգներ, կնայեր, թե ինչպես նա արագ կացնահար է անում ծառը: Մեկ էլ թաքստոցից դուրս կգար, կմոնչար այնպես, որ արջերն էլ էին քնից զարթնում և որջերում մոռում: Լեղապատառ փայտահատին մնում էր կամ փախչել, կամ օձի պես ծոմռատել Պանինի մտրակի հարվածների տակ: Պանինը որսորդ էր: ... Ձմռան լուսնյակ գիշերներին, երբ վախից ոչ ոք չէր

մոտենում Մթնածորին, Պանինի շներն անտառի բացատում արջի հետ էին կոխ կենում կամ հալածում էին խրտնած պախրային» (12-13):

«Բակունցը սեղմ, հակիրճ խոսքի վարպետ է: Բազմաթիվ են նրա մոտ վարպետի վարժ գրչով քանդակված կարճառոտ, պարզ նախադասությունների շղթաները»³: Պարզ համառոտ նախադասություններ շատ են հատկապես «Խոնարհ աղջիկը» պատմվածքում՝ ամենատարբեր հոգեվիճակներ պատկերելու համար: Մի դեպքում տասնյակ ամենատարբեր կառուցվածքների նախադասություններով եղելությունը պատմողը երկար վերհիշում է Խոնարհի մասին, ներկայացնում գեղեցիկ դրվագներ, և որպես հակադրություն հետևում է պարզ համառոտ նախադասությունը. «Ընկերս լռեց»՝ մնացածը թողնելով ընթերցողի երևակայությանը, «ձեռքով տրորելով ճակատն ու աչքերը, ասես ուզում էր հեռացնի այն դեմքը, որ հին տարիներից ժպտում էր այդքան պայծառ», մեկ այլ դեպքում պարզ համառոտ նախադասությունը հարմար լեզվական կառույց է պահի լարվածությունը ցուցադրելու համար. «Հրաժեշտը դժվար էր», մի երրորդ դեպքում հենց պատմվածքի սկզբում բնության նկարագրության մեջ այդ կարգի նախադասությունը նպաստում է խաղաղ, մեղմ նախաբանի արտացոլմանը. «Լուռ էինք»: Պարզ համառոտ նախադասությունները շատ են նաև «Միրհավ», «Վանդունց Բաղին», «Նամակ ռուսաց թագավորին» պատմվածքներում:

Բակունցյան պատմվածքների մի առանձնահատկությունն էլ այն է, որ լարված, տազնապալի պահեր նկարագրելիս գրողը հաճախ դիմում է նաև պարզ ընդարձակ նախադասությունների կուտակմանը, ընդ որում, այդ նախադասությունները խիստ կարճառոտ են, սեղմ, ուստի խիստ հարմար են պահի լարվածությունն ու դրամատիզմը հաղորդելու համար: Ահա, օրինակ, մի հատված «Խոնարհ աղջիկը» պատմվածքից: Դրամատիկ պահ է. վերջապես պատմվածքի հերոսը մոտիկից տեսնում ու զգում է Խոնարհի գեղեցկությունը, եզակի պահ է դա, ինքը շուտով պիտի մեկնի, և այս մթնոլորտում Բակունցը դիմում է կարճառոտ պարզ ընդարձակ նախադասությունների մի երկար շղթայի. «Բազմությունը լուռ լսում էր: Չէի լսում ես: Կողքիս Խոնարհն էր: Նրա աչքերում ուրախության ժպիտ կար: Ձեռքը բռնեցի» (156):

Նույն պատմվածքի մեկ այլ հատվածում կրկին առկա է պարզ ընդարձակ փոքրիկ նախադասությունների կուտակումը. նորից տազնապալի պահ է, և հնարավոր չէ այդ լարվածությունը արտահայտել այլ կառուցվածքների երկարաշունչ նախադասություններով, ուստի գրողը դարձյալ հարազատ է մնացել իր ոճին՝ սեղմ, կարճառոտ պարզ ընդարձակ նախադասությունների կուտակումով ներկայացնելով պահի լարվածությունը. «Մեկը բարձրանում էր սանդուղքով: Գլուխս վեր հանեցի: Գիրքը ձեռքիս դողաց» (156): Այս իրողությունը նկատելի է նաև «Այու սարի լանջին» պատմվածքում:

³ Իշխանյան Ռ., Բակունցի լեզվական արվեստը, Ե., 1965, էջ 15:

Ներկայացնելով Բակունցի պատմվածքներում պարզ ընդարձակ նախադասության ոճական բնութագիրը՝ հարկ է անդրադառնալ ևս մեկ բնորոշ իրողության՝ նախադասության տրոհված անդամներին: Մա նույնպես Բակունցի ոճի առանձնահատկություններից է: Ինչպես ճիշտ նկատված է, «ոճաբանական նկատառումներով, մտքի թելադրանքով հաճախ երկրորդական անդամները հեռանում են իրենց լրացյալներից և այս կամ այն չափով հնչերանգային անկախություն են ձեռք բերում», տրոհվող լրացումները «իրենց բովանդակությամբ ավելի հարուստ են, քան սովորական լրացումները և օժտված են հուզարտահայտչական լիցքով ու տրամաբանական ընդգծվածությամբ»⁴: Բակունցի պատմվածքներում հատկապես կարևոր ոճական արժեք ունի հետադաս տրոհված որոշիչը, որը շատ դեպքերում գեղարվեստական արժեք է ստանում և վերածվում մակդիրի: Այդպիսիք հատկապես շատ են «Ալպիական մանուշակ» պատմվածքում, որը գեղեցիկի պատկերման մի անկրկնելի նմուշ է, և գեղեցկության մթնոլորտի ձևավորմանը նպաստում են նաև յուրահատուկ տրոհված որոշիչները, որոնք, մեր կարծիքով, նաև մակդիրներ են: «Կաքավաբերդի բարձունքի միակ ծաղիկը ալպիական մանուշակն է, ցողունը կաքավի ոտքի պես կարմիր, ծաղիկը ծիրանի գույն» (180), «Ապա բարձրանում է քարե արծիվը, կտուցը կեռ թուր, մագիլները՝ սրածայր նիզակներ, փետուրները՝ որպես պողպատե զրահ» (179-180), «Ֆետրե գլխարկով մարդուն օջախի մոտ նստած կինը, որի երկար զգեստի տակ պարզ երևում էին նրա ծնկները, թվում էր քրմուհի՝ եռոտանու առաջ ծխի շարժումները գուշակող» (185-186): Նախադասության միևնույն անդամին վերաբերող մի քանի որոշիչների դեպքում նպատակահարմար է դրանց և՛ նախադաս, և՛ հետադաս կիրառությունը, քանի որ դրանք հատ-հատ շեշտվում են, մտապահվում ընթերցողի հիշողության մեջ, չեն կորում խոսքի ընդհանուր շղթայում, ուստի ոճական տեսանկյունից ցայտուն են, ուժեղ: Տրոհված անդամներով նախադասությունները շատ են նաև «Մթնաձոր», «Վանդունց Բադին», «Օրանջիա», «Անձրևը» պատմվածքներում:

Բակունցը հաճախ է խոսքը ոճավորում շրջուն շարադասությամբ, որը նրա խոսքի գեղարվեստականության տարրերից է: Պատահական չէ ականավոր լեզվաբան Մ. Աբեղյանի բնորոշումը. «Շրջուն շարադասության դեպքում արտահայտությունն ավելի կենդանի ու երաժշտական է դառնում»⁵:

Բակունցը նախընտրում է պատմվածքներում արտահայտված կարևոր առանցքային մտքերն արտահայտել պարզ ընդարձակ նախադասություններով, քանի որ ուժեղ է դրանց իմաստային ներգործությունը: «Այու սարի լանջին» պատմվածքում, երբ հեղինակը նկարագրում է գյուղ ներթափանցած նոր բարքերի հետևանքով առաջացած իրարանցումը, գրում է. «Գյուղում զենքը մահակից շատացավ» (58): «Նամակ ռուսաց թագավորին» պատմվածքում, ներկայացնելով

⁴ Աբրահամյան Ս., Առաքելյան Վ., Քոսյան Վ., Հայոց լեզու, մաս II, Ե., 1975, էջ 254-255:

⁵ Աբեղյան Մ., Հայոց լեզվի տեսություն, 1965, էջ 532:

Արթին պապի հետ կապված դեպքը, այսպիսի խորիմաստ ընդհանրացում է կատարում. «Այդ դեպքը մի ստվեր էր մեր լույս օրերի վրա» (211):

Բակունցի պատմվածքներում բարդ նախադասության ոճական քննությունից պարզվում է, որ գերակշռողը բարդ համադասական նախադասությունն է, և սա պատահական չէ: Ինչպես ճիշտ նկատել են ոճաբանները, «ոճի թեթևության, ինչպես և բանաստեղծականության համար կարևոր գործոն է համադասական կառույցը»⁶: Բակունցի խոսքը բանաստեղծական է, թեթև ու պարզ, և այստեղ, ի թիվս շատ լեզվական բաղադրիչների, իր նպաստն է բերում նաև բարդ համադասական նախադասությունը, որը, ինչպես նշվեց, գերակշռող կառույց է հեղինակի լեզվի ողջ շարահյուսական համակարգում: Արդեն Բակունցի պատմվածքներում պարզ ընդարձակ և բարդ համադասական նախադասությունների հետաքրքիր գուգորդումը նույնպես պատահական չէ, քանի որ «բարդ համադասական նախադասության կառույցն ավելի շատ ընդհանրություններ ունի պարզ ու միավորյալ նախադասությունների կառույցների հետ, քան բարդ ստորադասականը»⁷: Իսկ որն է առանձին վերցրած բարդ համադասական նախադասության ոճական դերը: Ամենից առաջ նկատելի է, որ բարդ համադասական նախադասությունը բնապատկերի իշխող կառույցներից մեկն է: «Միբհավ» պատմվածքը, որը կարելի է արձակ բանաստեղծություն համարել, ուղղակի հեղեղված է այդ կառույցով: Ահա պատմվածքի սկզբի հայտնի բնապատկերը.

«Աշուն էր, պայծառ աշուն:

Օդը մաքուր էր, արցունքի պես ջինջ:

... Այգում երիտասարդ կեռասենիները մրսում էին, քամուց խշշում: Սիմինդրի երկար տերևները թրերի նման քսվում էին իրար, պողպատի ձայն հանում: Կարծես ձիավորներ էին արշավում իրար դեմ, և սիմինդրի տերևը, որպես բեկված սուսեր, ընկնում էր քամու առաջ:

Արևի տակ ժպտում էր վերջին արևածաղիկը և օրորում դեղին գլուխը» (72):

Քիչ հետո կարդում ենք. «Աշնան արևը ջերմացնում էր նրան. ձորի խաղաղությունը դուրեկան էր, ծառերին փաթաթված վազերն օրորվում էին քամուց, Դիլան դայու միտքն էլ տուրտուր էր լինում, ինչպես քամիների բերանն ընկած չոր տերև: Քամուց հնձանի դոնակը մեղմ ճռնչում էր, և մաշված դուռը դողդոջ երգում էր մի հին երգ» (73): Բնապատկերի իսկապես եզակի օրինակ է սա, որտեղ լեզվական արվեստի շատ միջոցներ կարելի է գտնել. և՛ դիպուկ մակդիր, ուշագրավ համեմատություն, փոխաբերություն, և՛ խնայողական խոսք, և՛ անգամ առձայնության ու բաղաձայնության ինչ-ինչ դրսևորումներ, և այս ամենի հետ մեկտեղ՝ բարդ համադասական նախադասություն, որը, ինչպես տեսնում ենք, բակունցյան բնապատկերի հիմքն է կազմում: Նույնպիսի գեղեցիկ ու իմաստուն բնապատկերով է ավարտվում պատմվածքը՝ կառուցված բացառապես բարդ համադասական նախադասություններից. «Միայն իրիկվա հովից խշշում էին սիմինդրի կոշտացած ցողունները. չորացած տերևներն անհանգիստ խմբվում էին այս ու այն անկյունում,

⁶ Պողոսյան Պ., Խոսքի մշակույթի և ոճագիտության հիմունքներ, հ. I, Ե., էջ 369:

⁷ Նույն տեղում:

թպրտում հուսահատ ու անմոռնչ պառկում սև գուրի մեջ» (73): Ինչպես նշեցինք, Բակունցի պատմվածքները սովորաբար ավարտվում են բնապատկերով, որը խորհրդանշում է բնության հավերժությունը, նկարագրվող անցքերի անցողիկությունը: «Միրհավ» պատմվածքի այսպիսի վերջաբանը դրա լավագույն ապացույցներից է: Բարդ համադասական նախադասություններով լի բնապատկերով է սկսվում նաև «Մթնաձորը»։ «Մթնաձոր տանող միակ արահետն առաջին ձյունի հետ փակվում է, մինչև գարուն ոչ մի մարդ ոտք չի դնում անտառներում: ... Ծառերն ընկնում են, փտում, ընկած ծառերի տեղ նորն է ծլում, արջերը պար են խաղում, սուլում են չորանի պես, ոռնում են գայլերը, դունչը լուսնյակին մեկնած, վարազները ժանիքով փորում են սև հողը, աշունքվա փտած կաղիններ ժողովում»(11):

Տարվա բոլոր եղանակների հրաշալի պատկերներ կարելի է գտնել Բակունցի պատմվածքներում: Իհարկե, Բակունցը առաջին հերթին աշնան տաղանդավոր նկարիչն է, որը զգում է և նրբորեն պատկերում տարվա այդ եղանակի գեղեցկությունները, իսկ ահա «Այու սարի լանջին» պատմվածքում գտնում ենք գարնան եզակի նկարագիրը՝ դարձյալ հիմնականում արտահայտված բարդ համադասական նախադասություններով. «Օրերն ավելի էին տաքանում, կանաչը բոյ էր քաշում, բացվում էին ծաղիկները՝ կապույտ, դեղին, կարմիր, հազար բզեզ ու թիթեռ էին թռչում, մասուրի թփերի վրա ծիտն էր բուն հյուսում, և նախիրը փնչոցով արածում էր խոտը համեղ» (150):

Բակունցը քննարկվող լեզվական կառույցին է դիմում ամենալարված, դրամատիկ իրադարձությունների պատկերման ժամանակ: Այդ տազնապալի պահը գործողությունների կիզակետն է, սովորաբար ներկայացվում է պատմվածքի միջնամասում և մեծ մասամբ արտացոլվում է բարդ համադասական նախադասություններով: Ահա Վանդունց Բադուն տեղեկացնում են, որ գիշերը որդուն բերդում գնդակահարել են: Հետևում է ցավի ու տառապանքի զուսպ նկարագիրը՝ արտահայտված հիմնականում բարդ համադասական նախադասություններով. «Հետո հանկարծ մոնչաց ցավից՝ որպես զազան վիրավոր, և արցունքի երկու շիթ գլորվեցին խորշումած այտերի վրայով:

Բադին վազեց բերդի կողմը, շփոթվեց քաղաքի փողոցներում և չգտավ բերդը...» (36): Պահը ողբերգական է, ուստի այսպիսի առկախ համադասականները շատ հարմար են հերոսի հոգեվիճակի պատկերման համար: Շարունակվում է ցավը, Բադին անելանելի վիճակում է, իրեն պատեպատ է տալիս, ուստի նորից համադասական նախադասություններ. «Էլ ոչ ոք չկար, ամեն ինչ կորավ:

Բադին հագիվ կարողացավ մինչև քարվանսարան հասնել, ընկավ հենց ճամփի վրա, մի քարի մոտ: Գյուղացիք իմացան, եկան ու նրան գյուղ տարան» (37):

Ահա թե ինչպես է հեղինակը պատկերել մարդու և զազանի մենամարտը «Մթնաձոր» պատմվածքում, ուր իշխող են բարդ համադասական նախադասությունները. «Արջը թաթովն էր տալիս, աշխատում գետնով տալ մարդուն: Ավին մի

ձեռքով պաշտպանվում էր նրա հարվածներից, մյուսով փորձում բերդանի փողը արջի երախի մեջ կոխել, կրակել մի անգամ էլ:

Ծառն էր լինում արջը ետևի ոտների վրա, ձյուն շաղ տալիս, ընկնում, բարձրանում: Հանկարծ արջը բերդանի փողը բերանն առավ, սկսեց կրծոտել: Ավու ձեռքը սահեց բերդանի վրայով, մատը բնագոյաբար սեղմեց կեռ երկաթին, բերդանը մի անգամ էլ որոտաց: Արջը ոռնաց առաջվանից էլ պինդ, մեջքի վրա ընկավ, գլորվեց, որպես կտրած գերան... Ավին վազում էր, թռչում գերանների վրայով, ծառի ճղները ճանգոտում էին դեմքը սուր մագիլների պես, սայթաքում էր, նորից բարձրանում» (15-16): Այս պատկերում լարվածությունը ոչ մի պահ չի թուլանում, դրամատիկ ու արագընթաց իրադարձությունները անընդհատ հաջորդում են իրար, և այս ամբողջ լարվածությունը հեղինակը հիմնականում պատկերում է քննարկվող լեզվական կառույցով:

Նշենք, որ բակունցյան համադասական նախադասություններում բացարձակ իշխողը միավորական կապակցությունն է: Այստեղ գերակշռում է շարահարական կապակցությունը, որը կարելի է բացատրել հեղինակի լեզվի ժողովրդական տարերքով: Ահա տասնյակ բնորոշ օրինակներից մեկը. «Ջրտուփի այդ գիշերներին լուսինը շողք էր գցում առվի մեջ, ջրվորի պողպատ բահի վրա արծաթ փայլով պսպղում էին սերկևիլ տերևները, հովից հասկերը քսվում էին իրար, խշշում» (165): Ավելացնենք, որ պատմվածքներում և՛ շարահարական, և՛ գողվածական միավորական կապակցությունները ներկայացնում են առավելապես բաց շարքեր: Բակունցի պատմվածքներում միավորական կապակցությունից հետո հաճախականությամբ կարելի է առանձնացնել հակադրական կապակցությունը, որն իրացվում է առավելապես *իսկ, բայց, եթե ... ապա* շաղկապներով և հանդիպել է հիմնականում «Միրհավ», «Մթնածոր» և «Ալպիական մանուշակ» պատմվածքներում: Ահա մի բնորոշ օրինակ. «Եթե հնագետի գլխում Բակուր իշխանն էր և մատենագրի մագաղաթը, նկարիչը հիշում էր մանուշակները և լսում Բասուտա գետի խուլ աղմուկը,- երրորդ ձիավորի աչքի առաջ թարմ լավաշներ էին, պանիր ու մածուն» (184):

Բակունցի պատմվածքներում բարդ համադասական նախադասությունը նկարագրության հարմար կառույց է: Այստեղ նույնպես օրինակները բազմաթիվ են, և կարելի է նշել, որ գործ ունենք գրողի ոճի ևս մեկ նրբերանգի հետ. նկարագրության մեջ բացարձակ իշխող է բարդ համադասական նախադասությունը: «Այու սարի լանջին» պատմվածքում արձակագիրը այսպես է ներկայացնում գլխավոր հերոսի՝ Պետու կացարանը. «Իր հայրական հին տունը խանգարվել էր, կտուրը խոնարհվել, գերանները օջախի ծխից սևացած կախվել էին, կտուրի հողն ու քարը թափել ներսում: Վայրի կանեփը փարթամորեն աճում էր տան ավերակների վրա, և հարևանի հավերը քուջուջ անելուց հետո պառկում էին կանեփի շվաքում» (47): Քանդված օջախի ու խեղված ճակատագրի նկարագրություն է սա, և համադասական նախադասությունների շարանով շատ հարմար է պատկերել այն, անգամ կարելի է շարունակել կամ մնացածը թողնել ընթերցողի երևակայությանը:

Բարդ համադասական նախադասությամբ արտահայտված բազմաթիվ նկարագրություններ կան «Ալպիական մանուշակ» պատմվածքում: Հատկապես վրանաբնակ լեռնուհուն նկարագրելիս հեղինակը շատ է դիմում լեզվական այդ կառույցին. «Կինը մոտեցավ օջախին, տղայի սունկերը դեն դրեց, կռացավ ու փչեց միացող աթարներին: Նրա գլխի շորը հետ ընկավ, ֆետրե գլխարկով մարդը տեսավ կնոջ սպիտակ ճակատը, սև մազերը և նույնքան սև աչքերը» (184): Այնուհետև՝ «Կնոջ վերին շրթունքը աննկատ դողդողաց, ժպիտից շրթունքները կարմրեցին, որպես արնագույն մեխակի թերթեր, ժպիտից աչքերը փայլեցին» (187): Վրանաբնակ գեղջկուհու գեղեցկության զուսպ, սեղմ վրձնահարվածներ են սրանք՝ խիստ բնորոշ Բակունցի ոճին. նա չի սիրում բառերի ու նախադասությունների տարափ, նախընտրում է սեղմ, զուսպ խոսքը, ուստի և կարճառոտ, ոչ երկար բարդ համադասական նախադասությունները հեղինակի համար հարմար լեզվական կառույց են:

Նույնպիսի սեղմ կառուցվածք ունի նաև Բակունցյան բարդ ստորադասական նախադասությունը, որի բաղադրիչները երկար չեն, սեղմ են ու կարճառոտ, «թեթևասահ են, գերծ որևէ ոճական ծանրաբեռնվածությունից կամ տրամաբանական աստիճաններից»⁸: Ահա մի բնորոշ օրինակ «Վանդունց Բադին» պատմվածքից. «Մի օր էլ քաղաքից լուր բերին, թե հեռագիր է ստացվել, որ զորքը հեղափոխություն է գցել, թագավորին թախտից վեր են բերել» (29): Շեշտենք, որ բազմաբաղադրիչ ստորադասական նախադասությունները որոշակի կիրառություն ունեն հեղինակի պատմվածքներում: Բակունցյան բազմաբաղադրիչ նախադասությունների առանձնահատկությունն այն է, որ դրանք դժվարաշունչ չեն, հնարավորության սահմաններում սեղմ են, չունեն իմաստային ու կառուցվածքային խճողումներ, «հեշտամարս» են, հանգամանք, որը երիցս վկայում է հեղինակի պարզ և հստակ լեզվամտածողության մասին: Այսպես, «Նամակ ռուսաց թագավորին» պատմվածքից մեջբերվող հետևյալ ստորադասական նախադասությունը բաղկացած է 14 բաղադրիչներից և ունի 50-ից ավել անդամներ, սակայն «հեշտամարս» է՝ չունի զանազան խճողումներ և հեշտ է ընկալվում. «Պապս այնքան էր պատմել իր գլխով անցածը մեզ և հյուրերին, որ հենց խոսքի կծիկը ետ տար թե չէ, մենք պիտի իմանայինք, թե ո՞րն է պատմում՝ այն, ինչ եղավ գյուղի ավերակ մատուռում, երբ ջահել ժամանակ պապս ընկերների հետ գրագ էր բռնել, գիշերով գնացել փափախը դնելու մատուռի ներսը, ու մի աղվես դուրս էր թռել, վախից պապս գյուղի ճանապարհը կորցրել ու մինչև լույս բոստաններում պտույտ էր տվել, - թե ինչպես սարում գայլերը հարձակվել էին ձիու երամակի վրա, ինքը պահվել էր ձիերի արանքում և մի կերպ ազատվել» (209): Նկատենք, որ նման բազմաբաղադրիչ ստորադասական նախադասության կիրառությունը տեղին է ու ոճական տեսակետից նպատակահարմար, քանի որ ներկայացվում են Արթին պապի գլխով անցած եղելությունները, տվյալ դեպքում՝ երկուսը, և կարելի էր այդ եղելությունների շարքը շարունակել, որի շնորհիվ հնարավոր էր էլ ավելի

⁸ Իշխանյան Ռ., նշվ. աշխ., էջ 15:

շատ բաղադրիչներով ստորադասություն: Ավելացնենք, որ այս նախադասությունը ամենատարբեր կառուցվածքների պարզ և բարդ նախադասությունների շղթայում հնչում է տեղին և ձուլված է խոսքի այդ շղթային, այնպես որ բակունցյան լեզվում բոլոր կառուցվածքների նախադասությունները ներդաշնակվում են՝ ստեղծելով խոսքի խիստ ինքնատիպ մի հյուսվածք, չկան նույն կառուցվածքի նախադասությունների կուտակումներ: Տեղին է նշել բակունցյան բազմաբաղադրիչ նախադասության ևս մեկ տարբերակիչ առանձնահատկություն: Գրողը երբեմն այս կառույցի մեջ ներառում է ուղղակի խոսքը՝ իբրև կառույցի մեկ բաղադրիչ: Ահա մի օրինակ «Լառ-Մարգար» պատմվածքից.

«Եթե իր խոսքին կասկածող էր լինում, և Լառ-Մարգարն ասում էր, թե՛ - Էս հասակս քաշեր, նո՛ր պիտի սուտ խոսիմ,- իհարկե, գյուղում շատ քչերն էին իմանում, թե ինչ դառնությամբ է Լառ-Մարգարը այդ հասակը քաշել» (172): Բազմաբաղադրիչ նախադասությունները Բակունցի պատմվածքներում շատ հաճախական կիրառություն ունեն, այնքան հաճախական, որ կարելի է նախադասության այդ տեսակը ևս համարել գրողի լեզվի շարահյուսական համակարգի բաղադրիչներից մեկը: Բազմաբաղադրիչ նախադասություններով առատ են «Ալպիական մանուշակ», «Լառ-Մարգար», «Խոնարհ աղջիկը», «Մթնաձորի չարքը», «Այու սարի լանջին» պատմվածքները:

Բազմաբաղադրիչ բարդ ստորադասական նախադասության բոլոր տեսակներն էլ տարբեր հաճախականությամբ ներկայացված են Բակունցի պատմվածքներում: Դրանցից ամենահաճախականը համաստորադասությամբ կապակցությունն է: Արձակագիրը ամենից շատ լեզվական այս կառույցին է դիմում թվարկման դեպքում: Այսպես, «Միրհավ» պատմվածքում հանդիպում ենք մի շատ գեղեցիկ ու պատմվածքի ոգուն համահունչ համաստորադաս կապակցության. «Լինե՛ր, այնպես լինե՛ր, որ ինքը հնձվոր լինե՛ր, նրանց արտը հնձեր, Սոնան հաց բերեր իրեն, շապիկը քրտներ և քրտնած նստեր կողքին» (77): Կյանքի մայրամուտն ապրող և հիշողությունների մատյանում միայն մեկ գեղեցիկ էջ ունեցող Դիլան դայու ցանկությունների շղթան է ներկայացնում մեջբերվող նախադասությունը, ընդ որում, այդ շղթան կարելի է և շարունակել, ուստի համաստորադասությամբ կապակցությունը տեղին է գործածված և նպաստում է գրողի հիմնական ասելիքի արտահայտմանը: Թվարկման երանգով նույն լեզվական կառույցն առկա է նաև «Լառ-Մարգար» պատմվածքում՝ այս անգամ հազվադեպ հանդիպող միջադաս համաստորադաս նախադասություններով. «Ամռան շոգին, երբ արևն այնքան մոտ է, ջերմությունը՝ շատ, երբ շները շոգից տան ստվերում պառկում են, լեզուն հանած՝ թնչին տալիս, առվի եզերքին միշտ էլ կարելի է տեսնել Լառ-Մարգարին, ոտքերը մինչև ծնկները բաց, գլխին մի սպիտակ շոր, բահն ուսին» (162): Այստեղ լրացուցիչ ոճական երանգ է հավելել *էրբ* հարաբերականի կրկնությունը, քանի որ «համաստորադաս եզրերի կարևորությունը մեկիկ-մեկիկ ընդգծելու, նաև ոճական-արտահայտչական նկատառումներով հաճախ այդ բաղադրիչներից յուրաքանչյուրը գերադասի հետ կապակցվում է առանձին-առանձին՝ համա-

պատասխան շաղկապով կամ հարաբերականով»⁹: Համաստորադասությամբ կապակցությունները շատ են նաև «Մթնածոր», «Այու սարի լանջին», «Վանդունց Բաղին», «Ալպիական մանուշակ», «Մթնածորի չարքը» պատմվածքներում:

Բակունցի պատմվածքներում բազմաբաղադրիչ բարդ ստորադասական նախադասության մյուս երկու տեսակները՝ ենթաստորադասությամբ և անհամասեռ ստորադասությամբ կապակցությունները, ավելի քիչ են: Դրանք նույնպես սեղմ լեզվական կառույցներ են, կանոնիկ են, խճողված չեն բազմաստիճան ստորադասումներով: Ահա, օրինակ, ենթաստորադասությամբ կապակցության բնորոշ նմուշներ «Խոնարհ աղջիկը» պատմվածքից, որտեղ համեմատաբար շատ են այս կարգի նախադասությունները. «Ինձ թվաց, թե պախարան եղջյուրներով ծառի ձյուղերը դեն է հրում, որպեսզի չոր տերևներ հանի ձյունի տակից» (151), «Ահա այդ դեմքն է, որ մեխվել է հիշողությանս մեջ, թեև այն օրից անցել է 12 տարի և այն էլ ինչ տարիներ» (151):

«Խոնարհ աղջիկը» պատմվածքում տեղ գտած անհամասեռ ստորադասությամբ կապակցությունները նույնպես հիմնականում բաղկացած են երեք բաղադրիչներից, կանոնիկ են և՛ կառուցվածքով, և՛ շարադասությամբ. «Եվ որովհետև նրանք երկու քույր էին, դժվար չէր իմանալ, որ անտառում տեսած աղջկա անունը Խոնարհ էր» (152): Կամ՝ «Բացուտին երբ հասանք, ես մոտեցա այն գերանին, որի մոտ կանգնել էր աղջիկը»: Ինչպես այս օրինակներն են վկայում, «ի տարբերություն համասեռ երկրորդականների, անհամասեռները, որպես կանոն, տարբեր դիրք են գրավում գլխավորի նկատմամբ՝ մեկն առաջադաս, մյուսը՝ վերջադաս», ինչպես նաև «շարահյուսական ոչ մի կապի մեջ չեն գտնվում միմյանց նկատմամբ և առանձին-առանձին, անկախաբար ստորադասված են գլխավորին»¹⁰:

Եվ վերջապես, Բակունցի պատմվածքներում հանդիպում են հանրաստորադասությամբ կապակցություններ կամ մի քանի գլխավորով և ընդհանուր երկրորդականով կառույցներ, որոնք նույնպես հաճախական չեն. առկա են մի քանի պատմվածքներում («Ալպիական մանուշակ», «Մթնածոր», «Լառ-Մարգար» և այն էլ՝ հիմնականում մեկական դեպքում: Լեզվական այս կառույցի բավական ծավալուն օրինակը «Մթնածոր» պատմվածքում է. «Եվ երբ հեռավոր հարթավայրում արևը նոր է թեքվում դեպի արևմուտք, Մթնածորում ստվերները թանձրանում են, սաղարթի տակ անթափանց խավար է լինում, արջերը որսի են դուրս գալիս, վարազներն իջնում են ջուր խմելու, իր որջի առաջ զիլ ոռնում է գայլը, ոռնոցը հազարբերան արձագանքով զրնգում է Մթնածորում» (12): Այս դեպքում Բակունցը դիմել է ծավալուն բազմաբաղադրիչ հանրաստորադասությամբ կապակցությանը՝ գլխավոր բաղադրիչների շատությամբ ներկայացնելով Մթնածորի բնության ամբողջական պատկերը: «Ալպիական մանուշակ» պատմվածքում այս կառույցին

⁹ Պապոյան Ա., Բաղիկյան Խ., Ժամանակակից հայոց լեզվի շարահյուսություն, Ե., 2003, էջ 389:

¹⁰ Գաբեգինյան Գ., Ժամանակակից հայոց լեզու, Ե., 1984, էջ 326:

հանդիպում ենք երկու դեպքում: Ահա դրանցից մեկը. «Իսկ երբ քամին ցրում է ամպերը, ձորերում հավիում են ամպի ծվենները, պարսպի վրա երևում են մացառները, աշտարակի խոնարհված գլուխը և կիսով չափ հողի մեջ խրված պարիսպները» (179):

Բակունցը բարդ ստորադասական նախադասություններ կիրառելիս նախընտրում է ժամանակի պարագա, ուղիղ խնդիր և որոշիչ երկրորդականներով բարդ ստորադասական նախադասությունները:

Մի առիթով Վ. Բելինսկին այսպես է բնութագրել ոճը. «Ոճը ինքը տաղանդն է, ինքը՝ միտքը, ոճի մեջ է մարդն ամբողջությամբ, ոճը միշտ օրիգինալ է, ինչպես անհատականությունը, ինչպես բնավորությունը: Դրա համար էլ յուրաքանչյուր մեծ հեղինակ ունի իր ոճը»¹¹: Անվերապահորեն Ա. Բակունցը՝ այդ տաղանդավոր ու յուրօրինակ անհատականությունը, ունի իր ոճը, որի բառը, գեղարվեստական պատկերը անհնար է շփոթել: Անհնար է չճանաչել նաև բակունցյան նախադասությունը: Արձակագիրը, իր ասելիքի ոգուն համապատասխան, հրաշալի է զգում լեզվական կառույցների նրբերանգները, տեղին և դիպուկ կիրառում է դրանցից յուրաքանչյուրը, գտնում դրանց յուրօրինակ համադրությունները՝ ստեղծելով իրենը՝ բակունցյանը: Ուստի Բակունցի պատմվածքների լեզվի շարահյուսական համակարգի նաև այս բաղադրիչով է ձևավորվում մեծ գրողի ոճը՝ հանրաճանաչ ու անշփոթ:

СТИЛИСТИЧЕСКАЯ ЗНАЧИМОСТЬ ПРОСТЫХ И СЛОЖНЫХ ПРЕДЛОЖЕНИЙ В РАССКАЗАХ А. БАКУНЦА

АЙРАПЕТЯН Л. Г.

Резюме

Одной из особенностей прозы А. Бакунца является стилистическое использование разных типов простых и сложных предложений, стилистическая ценность которых заключается в их оригинальном использовании и сочетании, что обуславливается самим содержанием рассказов. А. Бакунц тонко чувствует различные оттенки языковых конструкций. Изящность стиля писателя, наряду с другими компонентами, отражается в его синтаксической системе.

¹¹ Բելինսկի Վ., Երկերի ժողովածու, Ե., 1954, հ. 3, էջ 204: